

«Ապահով համացանց»

Հունան Ավետիսյանի անվան Կապանի №9 ավագ դպրոց

Դասի նպատակը՝

- ❖ Աշակերտներին ծանոթացնել համացանցի պատմությանը, նրա կիրառման նպատակներին, անվտանգության կանոններին, համացանցի դրական և բացասական կողմերին
- ❖ Նպաստել համացանցից անվտանգ օգտվելու կանոնների յուրացմանը
- ❖ Իրազեկել առցանց աշխատանքի կանոններին
- ❖ Օգնել աշակերտներին ճիշտ և անվտանգ որոնում կատարել համացանցում
- ❖ Ձևավորել մտածելու, համեմատելու, վերլուծելու, ընդհանրացնելու հմտություններ, ինչպես նաև վարքային հմտություններ՝ տեղեկատվական հասարակության մեջ տեղեկատվության անվտանգությունն ապահովելու նպատակով
- ❖ Արժևորել, ընդգծել համացանցի գլխավոր նպատակները, ստացված տեղեկատվության ուսուցումն ու ընկալումը, տեղեկատվական մշակույթի ձևավորումը, մտահորիզոնի ընդլայնումը
- ❖ Իրազեկել www.safe.am կայքի մասին

Կահավորում.

Ինտերակտիվ գրատախտակ, դասագրքեր, համակարգիչներ:

Դասի ընթացքը

Նախապատրաստական մաս, դասի նպատակը -3 րոպե

Տեղեկատվական դարաշրջանում կրթության ոլորտի մեջ կատարվող արմատական փոփոխությունները սերտորեն կապված են տեղեկատվության և հաղորդակցության արդի միջոցների զարգացման և տարածման հետ: Ժամանակակից աշխարհը դժվար է պատկերացնել առանց համացանցի: Տրամադրելով անսահման և աննախադեպ հնարավորություններ՝ համացանցը պարունակում է նաև բազմաթիվ վտանգներ՝ հատկապես երեխաների համար:

Տեսահոլովակի ցուցադրում:

Համացանցի հնարավորությունների ներկայացում - 7րոպե

Սալիկահանդեսի ցուցադրում

Դպրոցականների համար համացանցը տեղեկատվության անսպառ աղբյուր է, ուսուցչի համար՝ միջոց դասը հետաքրքիր և անսովոր դարձնելու համար.լրացուցիչ նյութի որոնում, սալիկահանդեսների ցուցադրում, հետաքրքիր փաստեր և վիճակագրություն: Ինտերնետի հիմնական առավելությունը այն է, որ որպես դպրոցական ծրագրային նյութի լրացում,համացանցում կարելի է գտնել ցանկացած թեմայի մասին տեղեկատվություն:

Խթանման փուլ.

Հարցադրումներ հետևյալ հարցերի շուրջը -3 րոպե

- 1.Ի՞նչ է համացանցը:
- 2.Ի՞նչ է անհրաժեշտ համացանցին միանալու համար:
- 3.Ի՞նչ է համաշխարհային սարդոստայնը:
- 4.Ինչի՞ համար են կիրառում համացանցը:
- 5.Համացանցին միանալու ի՞նչ բրաուզերներ գիտեք:

Մտազրոհ մեթոդի կիրառում. համացանց բառի շուրջ -5 րոպե /ինտերակտիվ գրատախտակի վրա/

Իմաստի ընկալման փուլ. /5 րոպե/

Հատվածներ <Մայիլկը և ռոբոտը> բեմականացումից /բեմականացման սցենարը տես էջ 3/ :

Քննարկումներ բեմականացման շուրջ:Այնուհետև աշակերտները ներկայացնում են:

Համացանցին առնչվելու անվտանգությունը և էթիկան - 10 րոպե

- ✓ Առանց ծնողների թույլտվության որևէ անձնական ինֆորմացիա (նշանաբառ,անուն-ազգանուն,հեռախոսի համար,հասցե,դպրոցի համար և այլն) մ'ի հայտնեք համացանցի՝ ձեր նոր ծանոթներին:
- ✓ Եթե շփոթեցնող ինֆորմացիա եք ստանում կամ հայտնվում եք երկրնտրանքի առջև, մի՛ փորձեք ինքնուրույն գլուխ հանել. դիմեք ծնողների կամ ուսուցիչների օգնությանը:
- ✓ Համացանցում ծանոթացած նորահայտ անձի հետ իրական կյանքում հանդիպելը լավ գաղափար չէ, բայց եթե, այնուամենայնիվ, որոշել եք հանդիպել նրան, ապա գնացեք ծնողների հետ:
- ✓ Մի բացեք այն էլեկտրոնային նամակը, ֆայլը կամ WEB էջը, որը ստացել եք անհայտ կամ վստահություն չներշնչող անձից:
- ✓ Բացի ընտանիքի անդամներից ոչ մեկին մի վստահեք ցանց մուտք գործելու ձեր նշանաբառը. դա հետագայում կարող է տհաճությունների կամ նույնիսկ փորձանքի հանգեցնել:
- ✓ Մշտապես պահպանեք համացանցային անվտանգության կանոնները. դրանք ստեղծվել են, որպեսզի ցանցում ձեզ անվտանգ և անկաշկանդ զգաք:
- ✓ Էլեկտրոնային հաղորդակցության ընթացքում բարեկիրթ եղեք. չէ՞ որ նույնը սպասում եք հաղորդակցից:
- ✓ Համացանցում աշխատելիս սովորեք հարգել այնտեղ ընդունված օրենքները. դրանք կարող են տարբեր լինել՝ կախված հաղորդակցման միջավայրից: Հարգանքով վերաբերվեք այն մարդկանց ժամանակին, ում հետ հաղորդակցվում եք: Հիշեք,որ ցանցային ժամանակը ոչ միայն սահմանափակ է, այլև շատերի համար՝ թանկ:
- ✓ Հետևեք ուղղագրության և քերականության կանոններին:
- ✓ Հարգեք գիտակների խորհուրդները և ինքներդ էլ գիտելիքներով օգնեք այլոց:
- ✓ Եթե բանավեճի ընթացքում կրքերը բորբոքվել են, ապա վարվեցողության թույլատրելի նորմերը չխախտեք նույնիսկ այն դեպքում, երբ դիմացինը ձեզ դրդում է դրան:
- ✓ Անկախ նրանից, թե ուրիշները պահպանո՞ւմ են ցանցում հաղորդակցվելու էթիկայի կանոնները՝ դուք անշեղորեն հետևեք դրանց:
- ✓

Կշռադատման փուլ-5 թույլե

Տեսանյութերի ցուցադրում

<https://www.youtube.com/watch?v=w0ImO3S-bVY>

<Ապահով համացանց>-ի միջազգային օրը՝ 2015թ.-ի փետրվարի 10-ին, դպրոցում ներկայացվել էր բեմականացում <Սմայլիկը և ռոբոտը> վերնագրով,ինչպես նաև բարձր դասարանի աշակերտներին հանձնարարվել էր ստեղծել սալիկահանդես կամ տեսանյութ «Ապահով համացանց»վերնագրով: Լավագույն աշխատանքները տեղադրվել են Youtube.com կայքում:

➤ **Անդրադարձ -3 թույլե**

Աղյուսակի լրացում

Ի՞նչ է թույլատրվում համացանցում	Ի՞նչ չի կարելի անել համացանցում

Թեստավորում «Ապահով համացանց» խաղի օգնությամբ - 5թույլե

<http://www.safe.am/esafetykit/start.html>

Ինքնագնահատման թերթիկների լրացում – 3 թույլե

Վերջաբան. Համացանցի օգտագործումը օգտակար է, եթե պահպանենք երեք կանոն.

- ❖ պաշտպանեք ձեր համակարգիչը.
- ❖ պաշտպանեք ձեզ համացանցում.
- ❖ պահպանեք օրենքները համացանցից օգտվելիս:

Հունան Ավետիսյանի անվան Կապանի №9 ավագ դպրոցի ինֆորմատիկայի ուսուցչուհի Հերմինե Պողոսյան

Բեմականացում

«Սմայլիկը և Ռոբոտը»

Սցենարի հեղինակներ. Ինֆորմատիկայի ուսուցչուհի- Հերմինե Պողոսյան-Կապանի N9 ավագ դպրոց, Կենսաբանության ուսուցչուհի -Լիլիթ Դավթյան- Կապանի N9 ավագ դպրոց

Հեղինակ--Ժամանակով Ինֆորմատիկա անունով մի թագավորությունում ապրում էին երկու ընկերներ՝ Սմայլիկն ու Ռոբոտը: Սմայլիկն ուներ ամեն ինչ՝ խաղ ու խաղալիքներ, համակարգիչ ու պլանշետ, իհարկե՝ համացանցին միացված, իսկ Ռոբոտը, խեղճ Ռոբոտ, նրա ծնողները միայն բանաձևեր, հաշվարկներ, էլեկտրական մարտկոցներ ու լարեր էին ժառանգություն թողել նրան:

Տեսարան 1

Կահավորում----- խաղալիքներ, սեղան, համակարգիչ, գրքեր, փուչիկներ, գնդակներ, մանկական նկարներ փակցված /մանկական սենյակ/:

Սմայլիկը հաճախ էր հրավիրում ընկերոջը իրենց տուն: Նրանք սկզբում խաղում էին խաղալիքներով, իսկ հետո արդեն նրանց գրավեցին համակարգչային խաղերը:

_Սմայլիկ ,այսօր ո՞ր ենք ճանապարհորդելու:

_ Ուզո՞ւմ ես ծաղիկների թագավորություն գնանք:Այնտեղ այնքան անուշ է բուրում,օդը մաքուր է,գույները շատ:

-Գնա՛նք,պատասխանում է Ռոբոտը:Գնում են,դուրս են գալիս երեք ծաղիկներ, քնքշանքով պարում,խոնարհվում ու գնում:

-Օ՛,ինչ գեղեցիկ է, Սմայլիկ,շնորհակալություն:Ծոված օրից ես մետաղի հոտ եմ միայն զգացել ու չըխկչըխկոց, ճռռոց լսել, իսկ այս ծաղիկները ինչքան քնքուշ են օրորվում, այնքան գեղեցիկ պարում::

Սմայլիկը ժպտալով ասում է.

-Ռոբոտ, ի՞նչ սառն ես դատում ծնողներիդ մասին:Նրանք քեզ տվել են այն, ինչ ուրիշները չունեն, նրանք քեզ տվել են մեր ապագան:Արի խաղանք,ու դու կհամոզվես.

-իսկ ի՞նչ ենք խաղում:

_Կուզե՞ս նինջա:

-Հա:

-Դե,սկսեցինք: Ես կարմիրն եմ:

-Իսկ ես էլ կապույտը:

Դուրս են գալիս երկու նինջա ու խաղում:

Հաղթում է ռոբոտի նինջան: Սմայլիկը լացում է:

-Դու հաղթեցի՛ր ռոբոտ:

-Սմայլիկ դու մոռացել ես, որ ես երկաթից եմ, ամուր, ուժեղ:

_Սմայլիկ, արի չվիճենք, գնանք շոկոլադների աշխարհը, շոկոլադներն այնքան համեղ են, ավստս, որ չեմ կարող համտեսել: Ես սնվում եմ էլեկտրական հոսանքի մարտկոցից:

-Բա, որտեղի՞ց գիտես, որ համեղ են:

-Երբ մենք շրջում ենք կոնֆետների քաղաքում, քո դեմքը ժպտում է սմայլիկ:

Մտնում են մյուս Սմայլիկներն ու խառնվում զրույցին:

-Ռոբո՛տ, արի ուրիշ աշխարհ գնանք, համացանց:

-Իսկ ի՞նչ են անում այնտեղ:

-Դե, ես էլ լավ ծանոթ չեմ այդ աշխարհին,

Սմայլիկ2 - Ես իմ ծնողներից լսել եմ , որ կարելի է տարբեր խաղեր բեռնել, խաղալ...

Սմայլիկ3 - Բեռնել ու գտնել դասերի համար անհրաժեշտ տեղեկություններ, գրանցվել սոցկայքերում,

Սմայլիկ 2- Ունենալ սեփական էլեկտրոնային փոստի հասցե:

Սմայլիկ1—Բայց իմ ծնողներն արգելել են օտար աշխարհներում թափառել:

Ռոբոտ—Սմայլի՛կ, գոնե մեկ անգամ, ախր այնքա՛ն հետաքրքիր է:

-Դե լավ.. / ու երբ սեղմում են,, լսվում է Տրոյան վիրուսի ձայնը/

Բոլորը վախեցած վազում են այս ու այն կողմ, կուչ են գալիս:

Տրոյան --- Ախ, դուք, միամիտ երեխաներ, ինչ լավ է, որ ինձ հիմա ազատեցիք: Իմ ձեռքերն հիմա ազատ են ու ես կարող եմ մտնել ամեն մի տուն, համակարգիչ: Ես կփչացնեմ բոլոր համակարգիչների կարևոր ֆայլերը, կվնասեմ ծրագրերը, կփոխանցվեմ համակարգչից համակարգիչ ու կվարակեմ բոլորին: Ինձանից պրծում չկա: /քահ-քահ ծիծաղում է/

Այդ ժամանակ գալիս են ծնողները:

--Այս ի՞նչ իրարանցում է երեխաներ: Ու տեսնում են Տրոյանին:

--Այո՛, ամեն ինչ պարզ է: Դու օգտվելով երեխաների չիմացությունից մեր տուն մտար, չար ,անխիղճ Տրոյան:

-Այո, ես ձեր համակարգչում եմ ու ես կոչնցացնեմ ձեր համակարգչի կարևոր ծրագրերն ու ֆայլեր , իսկ դուք ոչինչ չեք կարող անել ինձ:

-Մայրի՛կ, մենք վախենում ենք-կանաչում է սմայլիկը:

Մի վախեցեք, Սմայլի՛կ, հիմա մենք կկանչենք մեր բարեկամ հակավիրուսին և նա կօգնի մեզ. Կասպերսկի՛:

-Ես այստեղ եմ Տրոյան, և դու անկարող ես վախեցնել մարդկանց: Ես իմ լաբորատորիայում ստեղծել եմ այնպիսի մի հակավիրուսային ծրագիր,որը կարող է պայքարել ձեզ մնան վիրուսների դեմ:Իմ և իմ ընկեր այլ հակավիրուսային ծրագրերի միջոցով մենք կպայքարենք վիրուսների,տրոյան որդերի,լրտեսածրագրերի դեմ:

Սմայլիկ - Մենք վախենում ենք նրանից, մի՛ թողեք մեզ մենակ,Կասպերսկի:

-Կասպերսկին միշտ այստեղ է լինում, պարզապես դուք չհասկանալով հեռացրեցիք նրան և մեզ օգտատերերիս անպաշտպան թողեցիք: Հակավիրուսային ծրագրերը պետք է միշտ ակտիվ լինեն, որպեսզի համակարգիչներն էլ պաշտպանված լինեն նման վտանգներից:

Մայրիկ-Ես մոռացել էի ակտիվացնել ձեզ համար ստեղծված բրաուզերը,որպեսզի դուք այսպիսի դրության մեջ չընկնեիք:

Սմայլիկ1 - Այդ ինչ բրաուզերի մասին է խոսքը մայրիկ:

-Գուգոլի մասին:

Սմայլիկ1-Իսկ ինչի համար է այն:

Գուգոլ - Ես կպատմեմ ձեզ նրա մասին:Եւ պատմում է գուգոլի մասին:

Ռուսական «Նոր սերունդ» կորպորացիան, ինչպես տեղեկացնում է ընկերության պաշտոնական կայքը, թողարկել է նոր ծրագիր՝ «Գուգոլ»: Այն մանկական բրաուզեր է, միացված է Internet Explorer-ին և սահմանափակում է երեխաների՝ համացանցից լիովին օգտվելու հնարավորությունը: Ծնողները, գրանցվելով բրաուզերի պաշտոնական կայքում, կարող են սահմանափակել երեխաների՝ համացանցից օգտվելու ժամաքանակը, ինչպես նաև, կարող են հետևել, թե երեխաները ինչ վեբ-կայքեր են հաճախում: Այն նախատեսված է 5-10 տարեկան երեխաների համար: Վառ ինտերֆեյսը շատ գրավիչ է, հատկապես այդ տարիքի երեխաների համար: Այժմ դուրս է եկել բրաուզերի բետտա տարբերակը, ծնողները կարող են ներբեռնել այն, միայն փորձարկելու համար:

Հայրիկ-Երեխանե՛ր , ծանոթացեք համացանցից օգտվելու կանոններին,որպեսզի դուք միշտ պաշտպանված լինեք:

- Ոչ մի անձնական ինֆորմացիա (նշանաբան, անուն-ազգանուն, հեռախոսի համար, հասցե, դպրոցի համար և այլն), առանց ծնողների հետ խորհրդակցելու, մի՛ հայտնեք ինտերնետային ձեր նոր ծանոթին:
-
- Եթե ինտերնետով ձեզ շփոթեցնող ինֆորմացիա եք ստանում կամ դրա միջավայրում աշխատելիս հայտնվում եք երկրնտրանքի առջև, մի՛ փորձեք ինքնուրույն գլուխ հանել. դիմեք ձեր ծնողներին կամ ուսուցիչներին:
-
- Ինտերնետից ծանոթ անձի հետ իրական կյանքում հանդիպելը լավ գաղափար չէ, բայց եթե, այնուամենայնիվ, որոշել եք հանդիպել նրան, ապա գնացեք ծնողների հետ միասին:
-
- Մի բացեք այն էլեկտրոնային նամակը, ֆայլը կամ WEB-էջը, որը ստացել եք անհայտ կամ վստահություն չներշնչող անձից:
-

- Բացի ձեր ընտանիքի ավագ անդամներից, ոչ մի այլ մարդու մի վստահեք ցանց մուտք գործելու ձեր նշանաբառը. դա հետագայում կարող է տհաճությունների կամ նույնիսկ փորձանքի հանգեցնել:
-
- Մշտապես պահպանեք ինտերնետային անվտանգության կանոնները. դրանք ստեղծվել են, որպեսզի ցանցում ձեզ անվտանգ և անկաշկանդ զգաք:
-
- Էլեկտրոնային հաղորդակցման ընթացքում սիրալիր և բարեկիրթ եղեք, որպեսզի ձեր հաղորդակցից նույն վերաբերմունքը ստանաք:
-
- Չմոռանաք, որ ինտերնետի միջոցով դուք շփվում եք, ի վերջո, մարդու հետ, և նրան էլեկտրոնային ուղերձ առաքելիս՝ աշխատեք դրա բովանդակությամբ չվիրավորել նրան:
-
- Ինտերնետով հաղորդակցվելիս հետևեք էթիկայի բոլոր այն կանոններին, որոնցով առաջնորդվում եք նաև առօրյա կյանքում:
- Ինտերնետով աշխատելիս սովորեք դրանում ընդունված օրենքները, որոնք, կախված հաղորդակցման միջավայրից, կարող են տարբեր լինել: Նախքան առաջին հաղորդագրությունն ուղարկելը՝ ծանոթացեք տեղական համապատասխան կանոններին:
-
- Հարգանքով վերաբերվեք այն մարդկանց ժամանակին, ում հետ հաղորդակցվում եք: Հիշե՛ք, որ ցանցային ժամանակը ոչ միայն սահմանափակ է, այլև շատերի համար՝ թանկ հաճույք:
-
- Ինտերնետով հաղորդակցվելիս աշխատեք ձեզ արժանավայել դրսևորել: Հետևեք լեզվի ուղղագրությանը և քերականության կանոններին:
-
- Հարգեք գիտականների խարհուրդները և ինքներդ էլ գիտելիքներով կիսվեք այլոց հետ:
-
- Եթե բանավեճի ընթացքում կրքերը բորբոքվել են, ապա վարվեցողության թույլատրելի նորմերն աշխատեք չխախտել նույնիսկ այն դեպքում, երբ դիմացինը ձեզ դրդում է դրան:
-
- Հարգանքով վերաբերվեք այլոց կարծիքին և սեփականությանը: Եթե ցանկանում եք մնալ չճանաչված, ապա ընդունեք, որ ձեզ հետ հաղորդակցվողը ևս ունի նման իրավունք: Ձեզ հղված ինֆորմացիան մի՛ հրապարակեք առանց առաքողի թույլատվությունը ստանալու:
-
- Ցանցում մի՛ չարաշահեք ձեր ազդեցությունը. վստահություն ձեռք բերելը դժվար է, կորցնելը՝ հեշտ:
-
- Անկախ նրանից, թե այլք պահպանում են ցանցում հաղորդակցվելու էթիկայի կանոնները՝ դուք անշեղորեն հետևեք դրանց: